

գլխավորապէս հրէաները, գնչուները, անսարները, թախտահիւնները և այլն:

Հայերը քրիստոնեաների մէջ առաջին տեղ են բռնում, այն է մօտ 95,000 (որոցից հայ-լուսաւորչականներ 68,000, հայ-կաթոլիկներ 12,000 և հայ-բողոքականներ 15,000): Հայերից յետոյ գալիս են յոյները (մօտ 40,000), իսկ քրիստոնեաների մնացած մասը կազմում են ևրոպական և ուրիշ ազգեր: Մահ-մէդականների մէջ տիրապետող տարրը կազմում են օսմանցիները կամ թիւրքերը (մօտ 140,000), իսկ մնացածը պատկանում են մահմէդական ուրիշ աղանդների և ցեղերի:

Դոկտ. Շաֆֆերի գիտական աշխատութիւնը առհասարակ մի շատ լաւ ձեռնարկ է նրանց համար, որոնց ցանկանում են Հին Կիլիկիայի կամ ներկայ Ադանայի վիլայէթի աշխարհագրութեան և մասամբ էլ ներկայ դրութեան հետ ծանօթանալ: Այդ աշխարհագրութիւնը իր ժամանակին բաւական լաւ ընդունելութիւն գտաւ ևրոպական աշխարհագրական գրականութեան կողմից:

Լ. ԲԱՐԱՅԵԱՆ

Սիմ. Բաբիեան՝ «Քառասնեղծութիւններ», 1904, Գետերուրդ.

Ոտանաւորների այս փոքրիկ ժողովածուի մէջ կան բազմաթիւ մոտիւններ: Հեղինակը պարզապէս փորձեր է արել: Զի կարելի ասել, թէ այդ փորձերը բոլորն էլ յաջողուել են: Մեծ մասամբ նրա երգերը տարտամ են, որոնց մէջ պակասում է բանաստեղծական խանդն ու յոյզը: Մարդ կարդում է և իսկոյն մոռանում: Սիմ. Բաբիեան զգացմունքի և մանաւանդ խորունկ զգացմունքի երգիչ չէ: Նա թեթեւ յաջողութիւն ունի, երբ նկարագրում է խաղաղ ընտելիւնը, լուռ դաշտերը, լուսնակայ գիշերները:

«Հորիզոնից երկինք սահեց

Պարզ լուսին,

«Թեքուեց թմրած առուի վրայ

Ուռենին:

«Շուրջս խաղանդ, շուրջս անդորր

Ու լռիկ,

«Միայն երբեմն շնչում էր

Մեղմ հովիկ:

«Մնջիկ նստած անուշաբոյր

Պարտիզում

«Մինչ ուշ գիշեր ականջ դրի
Անկշտում՝
«Ոնց բնութիւնն երկնքի հետ
Ներդաշնակ
«Երգեց սիրոյ խորհրդաւոր
Մի նուագ»:

Այսպիսի պարզ նկարչական ամբողջ պատկերներ կամ կը-
տորներ աւելի կամ պակաս յաջողուած՝ պատահում են ժողո-
վածուի մէջ: Այսպէս վատ չեն նրա «Արմեանակը», «Պերեկօպի
պարանոցի վրայ», «Պերեկօպի դաշտերում» և մի քանի ուրիշ-
ները: Դրանք բոլորն էլ բնութեան, խաղաղ տեսարաններ են,
բայց հէնց որ հեղինակը փորձում է խօսեցնել բնութիւնը, կամ
նրա մի հսկայ խաղը նկարագրել, օրինակ՝ փոթորիկ, իսկոյն
երևան է գալիս կատարեալ անկարողութիւնը: Պակասում են
ուժեղ արտայայտութիւններ, յաջող համեմատութիւններ և որ
գլխաւորն է՝ զգացմունքի թափ: Նոյնքան աղքատ են և՛ այն ոտա-
նաւորները, ուր հեղինակն աշխատել է մի որևէ իդէա դնել:
Դրանք բոլորն էլ տաղտկալի են, կամ միամիտ աշակերտական
փորձերի պէս:

Մեր անկեղծ խորհուրդն է պ. Բաբիանին, չշտապել
հրապարակ գալ առանձին գրքերով, ուշք դարձնել սեփական
գարգացման վրայ, որ այնքան պակաս է երևում, լաւ ծանօ-
թանալ մեծ վարպետների գործերի հետ, և գրել միայն այն,
ինչ իրան խորապէս յուզում է: Ոտանաւոր կարող է գրել ա-
մեն մարդ, բայց բանաստեղծութիւնը տուած է քչերին, ըն-
տրեալներին: Մի փոքրիկ շնորք ունի պ. Բաբիան, որ կարօտ
է լուրջ, ուշադիր մշակութեան: Շտապելն անօգուտ է:

Կ. Հ.

Խ. Բաբայեան՝ «Բանաստեղծութիւններ», ա. հատոր. Թիֆլիս, 1904 թ., դե-
նըն է յիսուն կողէկ:

Ամբողջ հարիւր երեսից մի հատորիկ է այս, ուր պ. Խ.
Բաբայեանը փոել է իր «Բանաստեղծութիւնները», որպէսզի
«մեր ապագայ սերունդը նրանց մէջ գտնի իր տառապող հէգ
սրտի արձագանքները», ինչպէս ասում է հեղինակը: Ցանկութիւ-
նը լաւ է, նպատակը զովելի, բայց ծայրէիծայր քաղելով պ.
Բաբայեանի բանաստեղծութիւնները՝ մարդ միմիայն ցաւում է
հէնց հէգ հեղինակի վրայ, որ պարզապէս տարուել է իրանու-
նը մի գրքի ճակատին անպատճառ դրօշմելու պատանեկական